ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԵՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 Փր. և կամ 2 րբլ. 50 կ. թղթդրմ. Ուրիշ ամեն տեղի համար օր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 Փր., վեցամսեայն 10 Փրանգ և եռամսեայն 5 Փրանգ։

Բաժնեգինները կանխիկ կը վճարուին և ծնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը պրելու վտստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է դրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ջ ՏԱՐԻ ԹԻԻ 34

1890 ԴԵԿՏԵՄԲԵՐ 10

ՆՈՅԵՄԲԵՐ 28 (Հ. Տ.)

ՏՈՐԵԿԱՑԱԹՓ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կընդունակ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Շարունակութիւն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին այժ գոյացնել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը ջանայ ներել անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Ժանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցել կամ թղթակիցել ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Ամերիկա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ գործիչների պէտք ունի հայրենիքը.—Մակու.—Բարեկարգիչ Բիւրօ փաշայի կառավարութիւնը.—Կատակ չէ.—«Սէմաֆոր»ին քաղուածներ.—Հայենական միջինկը Մանչեսթրի մէջ.—Ծանուցումներ.—Բանասիրական (Մի՛ դատէք մի մի դատիցիք)։

Ի՞ՆՉ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԷՏՔ ՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Վերջերս սկսուած է մի երեւոյթ նշմարել հայրենիքից հեռու գտնուող հայ երիտասարդութեան մէջ. դանադան հեռու տեղերից սկսած են թէեւ քիչ թուով, երիտասարդներ թողուլ իրենց քաղաք և գրաստում և գալ հայրենիքին մօտերը հայրենասիրական նպատակներով։ Այդ ինքնին վերին աստիճանի քաջալերական երեւոյթ երբեմն տարրեր հեռանկարներ առաջ կը բերէ որին կարելի է անուանել յառաջադիմութիւն։

Դեռ քիչ օր առաջ քաղաքիս մեկնեցան մի քանի երիտասարդներ որոնք Հայաստանէն վերադարձեր էին, դէպի իրեն, տուներ (արտասահման)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ՛ ԴԱՏԷՔ ՁԻ ՄԻ՛ ԴԱՏԻՑԻՔ

(Շար. 33րդ բուեն եւ վերջ)

Ո՛վ կրօնաւոր, Աւետարանի՛չ, փառաւո՛ր, քահանա՛յ, վերապիտակ ոսկեզին երկասպի սուրբ նման խօսքերը ի՞նչ են պահանջում, դէպի ո՞ր են առաջնորդում.—դէպի չհախինդրութիւն, անձնանսիրութիւն, պատուասիրութիւն, որկրամոլութիւն, եսամոլութիւն, պղծութեացութիւն, կաշառակերութիւն, չոլոքորթութիւն, միմսոսթիւն, քսութիւն և իրար վրա նախանձո՞ղ, իրար խածնո՞ղ, բամբասո՞ղ, վնասո՞ղ։ Աստցո՛ք, խնդրեմ, այս բաներից ո՞րը չկայ ձեզանում։ «Վա՛յ ձեզ. Դուք չէք մանում և մտնողներին էլ թոյլ չէք տալիս»։ «Ձեր պատճառաւ Աստուած հայհոյւում է հեթանոսաց մէջ»։

Ո՛վ Հայր Սուրբ, քահանա՛յ, փառաւո՛ր. այն որ ծածուկ տեղում գործում ես մարդկանցից ամաչելով վախենալով, հրապարակա՛ւ գործիր. Աստուած անի՛ց ամաչիր, վախեցիր։ Պատուելի՛, աւետարանի՛չ, դպա՛յ, ղամաղա՛յ, երէ՛ց, քարոզի՛չ, փոխանակ միսիօնարից վախենալու, Աստուածանից վախեցիր. այն որ ծածուկ տեղերում գործում ես, յայտնի գործի՛ր, յայտնի արա. Դուք կարծում էք թէ ռամիկ ժողովուրդը, չինականը երթալու համար, Ի՞նչն էր մղած այդ անձերին ձգել իրենց երկիրը ու Հայաստան դիմել և ի՞նչ էր պատճառն որ դանդաղ այնչափ չատաւ հարկադրած էր վերադառնալ իրենց քայլերի վրայ։

Այդ երիտասարդներ մի քանի ուրիշների նման բորբոքուելով հայրենասիրական ընթերցուածներէ և խրախուսուած վերջին դէպքերէն, հնազանդելով իրենց հայրենասիրական կանդին, ձգեր իրենց չահեկան զբաղումներ, հանգիստ կեանք և փութացեր էին դէպի հայրենիք, քանի որ սկսեր էին շշուկներ լսել սահմանադիր վրայ ազատամարտական շարժուձեւեր կը լինին։ Հասնելով անդուր պիտի լինէր իրենց գործատեղին, իրերը սկսան իրենց տարրեր գտնել երեւիլ. յեղափոխական լուրի և ծանրացալ գործունէութիւնը իր ներկայութեամբ սկսաւ երեւիլ առանց վի պատանական չքեղ դոյներին. յարակից ձանձրութիւններ, բնակիչ դիւղացիների առերեսոյթ սառնութիւնը, աչերեւեան փակ կեանքը իրենց բոլոր ձեր արարմունքը, ձեր ընթացքը չէ իմանում, չէ ուսումնասիրում։ Մի օր մի աւետարանչից հարցրեցին. «Դու որ շրջունակ այդչափ խմում ես և հայհոյում, միթէ՞ չես վախենում.— Ումի՞ց, սահապի՞ց (միսիօնարից), հարցրեց աւետարանիչը։ — Ո՛չ. Աստուածանից չե՞ս վախենում, պատասխանեց հարցարարը։—Աստուած ողորմած է, նրա հետ ինչպէս լինի կարող ենք վարուել, բայց չատ դժուար է լինում երբ գազանիքը սահապը խմանում է որովհետեւ ուռճից կարում է։—Միթէ՞ մարդ խարելը մարդկութեան դէմ չէ։ — Պետս միսիօնարները իրենք ինչո՞ւ են խաբում. սեանում ես, վեր են առնում միշտ գրում են թէ այսչափ ապաշխարող կայ, որոնց մէկին էլ ես եմ, ինչպէս որ սեանում էք»։

Վերջապէս հոգեւորականնե՛ր, իրար Թանապուրին թիւս մի ասէ՛ք, եթէ ոչ բոլորդ էլ սուված պիտի մնաք։ Ծածկեցէ՛ք, ծածկեցէ՛ք, թողէ՛ք որ մնայ մինչ վերջին դատաստան։

Բայց միթէ՞ մի ճշմարիտ կրօնք չկայ մարդկային ազգի համար որ մարդս նրբանով կատարելուի և փրկուի։ Այո՛, կայ և այդ է հատուած, յոյս, սէր, որոնց պատուիները պիտի լինին պարտաճանաչութիւն, ինքնաճանաչութիւն, ապդասիրութիւն, անձնուրացութիւն, ժուժկալութիւն, չարքաշութիւն, զոհողութիւն, սրբութիւն և անչահախնդրութիւն որոնցմով պիտի տարբերի բանական էակ և պիտին գործադրելի ծրագիրներին հակառակ եկած էին։ Դէպքական կեանքն իսկ անհանգուժելի եղած էր իրենց որ չկարողանալով դէմ երթալ չատերի համբերել, փսխմացեր էին երկրային դժոխքին ադատուել և վերադառնալ այն երկիրները ուր կան եւրոպական քաղաքներ ազմկալից կեանք և անձնական կատարեալ ապահովութիւն և գատարծութիւններ։

Ինչպէս ըսի, այդ անձեր վերադարձեր էին կրթութենով իրենց անձնասիրական տրամադրութիւններ. նպատակադրութիւնը հասնելուն պէս կանռեաւոր փաշաներ պիտի գանէին և փայլիլուն համազգեստներով բանակներու մէջ կամաւոր պիտի գրուէին, ինչպէս այդ կը լինի Ֆրանսական կամ ռուսական պետութեան բանակներուն մէջ։

Անշուշտ չատ դժուարին էր այդ երիտասարդներուն սկզբնական եռանդը. սակայն փորձը ցոյց տուաւ որ դոքա տակաւին չատ խակ էին ադրելու ուրիշ կեանքի մը մէջ և իրենց երկրին

կանութիւն ունեցող մարդը և դերազանց անբան անասուններից, չորսոտանիներից։

Հոգեւորականնե՛ր, դուք որչափ կուզէք իրար գատեցէք, նախատեցէք, անիծեցէք, հալածեցէք և բաժանուեցէք։ Գիտեմ, դուք պիտի չվիանաք, չուզուիք մինչեւ որ Հայաստան ինքնավարութիւն ստանայ, ազատութիւն լինի. ինչպէս Սադմոսերգուն Դաւիթ ասում է. «Երբ Սիոնի պարիսպները չինուին, ո՛վ Տէր, յայնժամ պիտի հաւանես զոհերին և պատարագներին»։ Տէ՛ր, Հայաստանիս պարիսպներն էլ չինէ որ ընդունելի պատարագներ և պաշտամունքներ մատուցանենք քեզ։

Զ

Մին էլ էն ես տեսնում որ մեր գերասանցարներից մէկը՝ աչխարի մեծ փոփուկ տեղերից խորտակը հին դինու հետ անոյշ արած, դուրս է գալիս հրապարակ և ծխաքարշը ձեռքին նստում է խանութներից մինի առաջում ոտքը ոտքին գցած ու սկսում է պատել հայ ազգին թէ Հայը պաղած է։ Բայց պարոնը մոռանում է որ Հայ ասուածը ինքն է. եթէ պաղած է, ինքն է. եթէ մեռած է, ինքն է և եթէ անտարբեր է, ինքն է։

Մենք չարունակ սովորութիւն ենք արել ասելու թէ Հայ ազգը պաղած է։ Ես զարմանում եմ թէ այդ Հայ ազգը ո՞վ է որ պաղած է։ Հայը մի սենեակի անո՞ւն

ՎԱԿՈՒՆ

Մոլորակի վրայ ամեն երեք վայրկյանը մեկ մի նոր երեխա է ծնվում։ Ամեն վայրկյան մեկ էլ մեկը մահանում է։ Ամեն վայրկյան մեկ էլ մեկը ծնվում է։ Ամեն վայրկյան մեկ էլ մեկը մեռն

Հայ երեւելիների ուղերձը

«Այս առաւօտ լրագիրները կը հրատարակեն Սուլթանին ուղղուած դոհունակութեան և հաւատարմութեան մի ուղերձի պատճէնը որ ըստորագրուած է 40ի չափ հայ պաշտօնատարներէ և վաճառականներէ։

«Այդ ուղերձ իսկապէս իր տեսակին սեփական (sui generis) ոճով, որ ինձ համար արժէք մը չունի։ Ըստորագրութիւններուն մէջ կը տեսնուին եվմոական նախարար Բակոր փաշաի, նախկին Խըտիվ Իսմայիլ փաշային Կ. Պոլսի գործակատար Աբրահամ փաշաի, դատական գործերու նախարարութեան խորհրդական Վահան էֆէնտիի և վերջապէս արտաքին գործերու նախարարութեան իսրհրդական Տատեան Յարութիւն փաշաի ստորագրութիւնները։ Տարօրինակ մի զուգադիպութեամբ, այն վայրկենին երբ Յարութիւն փաշա կատարգրէր այդ հետաքրքրաշարժ ուղերձ, անդին Թիւրք դատաւաններէը հինգ տարի բանտարկութեան կը դատապարտէին բուն իսկ իր եղբօրորդին, Տատեան Վահրամ պէյը, ամբաստանելով զինքը թէ հայ յեղափոխական կուսակցութեան գլխաւորներուն հետ սերտ յարաբերութեան մէջ գտնուած է։ Միեւնոյն դատարանը միեւնոյն պատժին դատապարտած է նաեւ Տօքթէօր Թիւեահքեանը, բժիշկ և նախկին նախագահ Հայերի Ազգային Երեսփոխանական ժողովին։ Այս պատմուածները կարծեմ թէ բաւական են համոզելու համար ձեր ընթերցողները թէ Հայենական խնդիրը հեռու, գեռ չատ հեռու է կարգադրուելէ, հակառակ ամեն հաւատարմական ուղերձներուն։

Անգլիահն պաշտպանուած Հայեր

Հայենական խնդիրը երթալով կը կնճռոտի և կը խառնակուի և մարդ չգիտեր թէ ինչպէս պիտի վերջանայ։ Օր չանցնիր որ թիւրք ոստիկանութիւնը չձերբակալէ մայրաքաղաքի բազմաթիւ կէտերէն վրայ Հայեր ոքանչ իրր թէ մասնակցած լինէն իրօք կամ անգիտօրէն այն գործին որի հայենական դատ ապրումին անունը կուտան։

Գեռ վերջերս, նշանաւոր փաստաբան մը յաջողցաւ կծիկը դնել անգլական չոգենաւով մը և Ս. Ուիլեամ Հուալթ դրդուելով այն մարդկային և գթութեան զգացումէն՝ որ ամեն քաղաքակրթեալ ազգերի մէջ առհասարակ կը գտնուի, հրաման արաւ վաւ փորէն անցնող ամեն անգլիական չոգենաւերի նաւապետներուն որ ընդունին իրենց նաւերի մէջ, առանց անցագրի և ի հարկին ձրիապէս այն ամեն Հայեր որոնք կը ներկայանան իրենց, փախչելով թիւրք ոստիկանութեան հալածանքներէն։

Էրզրումի անգլիական խումբը

Անշուշտ անդրկուիս ունիք որ Կարնոյ անգլիական հիւպատոս Պրն. Ֆիլիպոս Լոյտ չատ օրերէ ի վեր այստեղ է։ Ս.Ս.Հուալթի կոմէ կանչուած էր որ կը փոփոքերը հանկնայ նորա կարծիք Արմենիոյ վիճակին վրայ։ Լաւ է գիտնալ որ Պր. Ֆիլիպոս Լոյտ մոլեռանդ Իւլանտացի մ'է, բայց քական և Օռանճիստ. չատ խոհեմ բնաւորութեան տէր մէկը որ տեղ մը չէ կրցած ձեալ։ Իւլանտայի բանտարկեալ վրայ ընդհանուր տեսուչ անուանուելով մ'ին ստոիճան ստեղի գտաձաւ որ կառավարութիւնը ստիպուեցաւ այդ պաշտօնէն հանել զինքը։ Միեւնոյն պաշտօնով Եգիպտոս ղրկուեցաւ ուր իր կրթուն բնաւորութիւնը իրեն բազմաթիւ նեղութիւններ պատճառեց։ Ուրիշ ճար չգտնելով լորդ Սալիսպըրին կարնոյ հիւպատոս արաւ զինքը ուր նա աւելի յայտնի է իր թրքասիրութիւնով և Հայերին համար ունեցած թշնամական ընթացքով։ Ակնկ կրնաք հասկնալ թէ ի՛նչ ստոիճան վստահութեան արժանի են իր տալիք տեղեկութիւնները։

Վանի Արքեպիսկոպոսի աքսորուիլը

Հայ լուսաւորչական եկեղեցւոյ ամենաբարձրաստիճան եկեղեցականներէն մին, Թիւրքահայերի նախկին Պատրիարք և Վանի Արքեպիսկոպոս, Ա. մեն. Խրիմեան արտօնուած է ուխտի երթալ Երուսաղէմ։ Այս չնորհալի արտօնութիւն իրօք քողարկուած աքսոր մ'է և ամեն մարդ գիտէ թէ թիւրք կառավարութիւնը կուզէ ազատիլ, իր հայրենակիցներուն մէջ չատ յարգուած և մեծ ժողովրդականութիւն վայելող մի հայ եկեղեցականի ներկայութենէն։

ՄԱՆՉԷՍԹԸՐԻ ՀԱՅԵՆԱԿԱՆ ՄԻԹԻՆԿԸ

(Շար. 33դ թուհն եւ վրեջ)

Առեներաքը չուզեր պաշտպանել այն ամեն գործեր որոնք վերջերս տեղի ունեցան Հայերի ձեռքով։ Անոնք ճշմարիտ յիմարական չատ մը գործեր արին և կրցան բազմաթիւ անբաղդութիւններ առնել։ Բայց կը հարցունէ առենարաքը թէ պէտք չէ՞ր փնտռել նաեւ նպատակն ու ճշմարիտ պատճառը այդ յիմարական և եղեռնական արարքներուն։ Իրա՞ւ է որ Բ. Դրան ըրիստոնեայ հպատակները միշտ անարժան համարուած են նոյն իսկ իրենց վարչութեան և պաշտպանութեան գործին մասնակցելու։ Իրա՞ւ է որ իրենց եկեղեցիները պղծուեցան և իրենց գպրոցները գոցուեցան բոլորովին քահանաներով (Այո)։ Իրա՞ւ է որ այդ տրիւնարքու չահատակութիւններ իգործ դրուած են անոնց վրայ և թէ գիւղերն աւերի մատուած են, թէ մարդիկ չարգուած են և թէ կիներ ամենավարկաբեկ նախատինքներու առարկայ դարձած են, Բ. Դրան ամենավարներն դաշնակիցներին ձեռքով։

Եթէ այս ամենը ճշմարիտ են և եթէ և ոչ մի հատուցում ձեռք բերուած է, Անգլիան որ խոստացած է երաշխաւորել լաւագոյն պաշտպանութիւն մը Արմենիոյ քրիստոնեաներուն, մինչ պարտական չէ՞ դադրեցնել տալ գործերի այս վիճակը (Մափահարութիւն)։ Եթէ առաջին մէկը եղնէր բսէր որ պետական մարդիկ կարեկցական խնդիրներուն մէջ գործ չունին, առենարաքը պիտի պատասխաներ թէ այն բանը որ զմեզ կը զբաղեցնէ այսօր, կարեկցութիւնն կամ զգացումի խնդիր մը չէ, բայց եթէ խնդիր է աղետուելու հրապարական աղգային խոստումէ և երաշխաւորութենէ մը և թէ ազգային պատիւը երբէք չպիտի վտանգուի եթէ այս երաշխաւորութիւն մեր վրայէ նեռանք (Մափահարութիւն)։ Ուրիշ յայտնի չէ թէ Թիւրքիան մի այնքան փճացած կառավարութիւն է որ եթէ միջամտնք իր ներքին վարչութեան, թերեւս վտանգի մատնենք և պատճառ դառնանք իր բաժանման։ Արդ ի՞նչ պատկեր կրնանք գծագրել այս աղետութեան մայր, հարստահարեալներուն ապաստան, գերիներուն բարեկամ եղող Անգլիան, եթէ նա պաշտպան կանգնի մի այնպիսի պետութեան որ չարդեր և չահատակութիւններ ի գործ կը դնէ նոյն իսկ անոնց վրայ, որոնց համար բացայայտ կերպով իր պաշտպանութիւն խոստացած էր։ Այսպիսի մի նպատակ բոլորովին կեղծ է և հիմ չբռներ։ Եթէ Հայերի ազգամիտ դատապարտին պահանջած միջոցները մինչեւ այժմ ի գործ դրուած լինէին, Թիւրքիան չէր պիտի տկարանար, այլ աւելի եւս պիտի զօրացած լինէր։ Հայերը չեն պահանջեր թիւրք կայսրութեան ամբողջութիւնը խորտակել։ Հայերը կը փափաքին չարունակել միայ նորա օրինաւոր հպատակներ։ Նոքա չատ լաւ գիտեն թէ իրենց մէկեուկես միլիոն հայրենակիցներ ինչ ոտնատակնքների ենթարկուած են այսօր Ռուսիոյ մէջ։ Գիտեն որ իրենց լեզուս, գրականութիւն ու կրօնք ոտնատակ են։ Նոյա պահանջն է միայն իրենց լեզուի, գրականութեան և ազգային առաքելական եկեղեցիի պահպանումը (Մափահարութիւն)։ Իրենց պահանջածներն որոնք Թիւրքերն կը պարտին երաշխաւորել, ամենատարրական պահանջներ են որոնք ամեն քաղաքակրթեալ մարդեր իրաւունք ունին ունենալու, այն է կեանքի, կայքի և պատուի ապահովութիւն։ Կը պահանջեն որ Թիւրքիան աւարի չտայ գիւղերը իր զօրքերի թալանները ապահովցնելու համար։ Հայերը պատրաստ են անձամբ պաշտպանել իրենց ահմանապահ լեռները և ամեն գնո վճարել կառավարական եկամտանեռին իրենց բաժին ինկած հարկը և իրենց անձնականէն հոգալ իրենց զօրատաժնի ծախքը (Մափահարութիւն)։ Առենարաքը կը կարծէ որ մարդասպանութիւնների և բռնարարութիւնների մասին Թիւրքիան օրէնքները չատ ախտաւ և ճշգրտագործութիւնները քաղաքավարի կերպով պիտի լինին։ Եթէ Թիւրքերը ուզին միայն ընծայել Հայերին ցնդհանուր կառավարիչ մը որ բացարձակ և վճռական իշխանութիւն և կատարեալ իրաւունք ունենայ, ճիշդ Լիբանանի ընդհանուր կառավարչին տեսկական իրաւունքներուն, ու մի այդպիսի վարչութիւն, միջազգային խոստութիւն յառաջ բերկրական խնդիրների մէջ գործ չունին, առենարաքը պիտի պատասխաներ թէ այն բանը որ զմեզ կը զբաղեցնէ այսօր, կարեկցութիւն կամ զգացումի խնդիր մը չէ, բայց եթէ խնդիր է աղետուելու հրապարակական

թէ «Օսմանեան վեհապետութիւնը այնպիսի մի բան է որ անոր դիմադրելը առաքինութիւն մ՚է, իսկ թոյլատրելը ոճիր մը կը լինի, եթէ ապստամբութիւնը՝ յիմարութիւն մը և ժողովրդի կատարեալ ինքնասպանութիւն մը չլինէր, (լսեցէ՛ք, լսեցէ՛ք)։ Հայերը դարերէ ի վեր գժբաղդութեան գէմ կը կռուին, օտարին թանկագին փոքր համակրութիւններովը։ Բարենորոգութիւններ խոստացուեցան իրենց հանդիսաւոր կերպով · բայց ժողովրդի վիճակը չար քան զառաջինն եղած է։ Իրենց պահանջը այնքան չափաւոր եղած է որ և ոչ մի ուրիշ դժգոհ ժողովուրդ այդքան չափաւոր կերպով չէ պահանջած իր կառավարութենէն» ։ (Լսեցէ՛ք, լսեցէ՛ք)։

Որոշումը ընդունուած լինելով վերջացաւ մինիսկը, լորտ Քաղաքապետին համար չնորհակալութեան քուէով մը որ Պր. Ա. Օ. Աբսէնեանի կողմէն առաջարկուեցաւ և Պր. Կ. Է. Սթիւթ-Թարմի կողմէն ալ այժ տրուեցաւ։

Պր. Սթիւթ-Թարմ յայտնեց թէ չը կարծուիր որ մինիսկի կազմակերպող մարմնի կողմէն յարգանքի պակասութիւն մ՚անել ուզուած լինի լորտ Քաղաքապետին, քաղաքի պաշտօնական պզտարարութիւնների չըջանակին վրայ մինիսկի յայտարարութիւնները փակցնելով։ Այդ միջադէպին տեղի տուած են յայտարարութիւն փակցուցողները, որոնց իրաւունք տրուած չէր այդպիսի մի գեղծում գործել. խնդրագրողները այդ միջադէպի համար չատ կը ցաւին»։ Լորտ Քաղաքապետը խոստացաւ մինիսկի ուրոյնութիւնը ուշադրիլ նախարարապետին և աւելցուց թէ «երջանիկ կըլնայ ժողովրդի գինք որ Մանչէսթրի քաղաքացիներին և մասնաւորապէս իր հայ քաղաքացիներին՝ որոնք չատ կը յարգէր, պատեհութիւն տուած էր փոխանակելու իրենց տեսութիւնները այսպիսի մի չատ կարեւոր խնդրի վրայ»։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒՀԻ ՄԸ (*սպառած*)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՅ (*Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։*) (1 *ֆր.* 10 *սնթմ.*) 1 ֆր. 50 *սնթմ.*
Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներուն պանդխտութեան սխալ հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ փիպական կերպով։*) Գին (90 *սնթմ.*) 1 ֆրանգ 20 *սնթմ.*
Զ. ԳԱՄԱՌ ՔԱՖԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենն առարտեղուն · (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 *հատը* 2 ֆր. և 50 *սանթիմ*, *հատը* (5 *սնթմ.*) 10 *սանթիմ*։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԻՆԳԸ ՏԱՃԿԱՀՈՅԱՍՏԱՆՈՒՄ. (*Սպառած*).

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերուն համար որոնց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ը ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՔ

ԳՐՔԷ Ֆ. Ա.

Թիւրքիոյ Հայերուն և իրենց դրացի Թիւրքերուն, Քիւրդերուն, Զէքքէզներուն, Ասորիներուն, Եզիտիներուն, Գըզըլպաշներուն և այլ ազգերուն վրայ վիճակագրական և ցեղաբանական ժամանակ և հետաքրքրական տեղեկութիւններ տրուած են այս տետրակին մէջ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգէ բնակիչներուն թուին մէկ բազդատական ցուցակը կցուած է տետրակին վերջը։ Գինն է 50 սանթիմ, փոստի ծախքը Արմենիայի խմբագրատունէն վճարուելով։(Պարսկաստանի Հայերուն համար 35 սանթիմ)։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՔԷ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անթարոյական մի հայր իր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իր որդւոյ ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։

Կը ծախուի Արմենիայի խմբագրատունը, գին 1 ֆրանգ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար · անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկին դիմումատնել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունիլ իրենց ծանուցումներ ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիներն նշանակուած են Արմենիայի ճակատը, տառի վրայ հաշուելով. 1 երկտողի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի։ 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

ԾԱԽՈՒԻ ԳԻՐՔԵՐ

— Ծերենց.—ԵՐԿՈՒՆՔ Թ ԴԱՐՈՒ (Ազգային անուանի վիպասան Ծերենցի գրած այս գիրքը ցոյց կուտայ Թէ մահմէտականներն Թ դարին մէջ Հայաստան արշաւելով ինչ բարբարոսութիւններ կը գործէին այնտեղ, ինչպէս և կը գործեն այժմ նոյն իսկ ԺԹ դարին մէջ։ ԵՐԿՈՒՆՔԸ իբրև օրինակ ցոյց կուտայ ազգային գործիչներին Սասունցի Ծովէնան անուն մէկը որ իզուր բարձր տեղերէ ազգային փրկութեան ակնակալելէ յետոյ, վերջապէս ժողովրդին մէջ կը փնտռէ ազատութեան այժը և անով կը յաջողի մի քանի յաղթութիւններ տանիլ թշնամիներին դէմ։) 3 ֆր. և 50 սնթմ.

—Խրիմեան Հայրիկ · —ՎԱՆԳՈՅԺ (Ամէն. Խրիմեան Սրբազանի գրած սրբատաչարժ, խրատական և ազատաչունչ տետրակը 1876ի վանի հրդեհին նըկատմամբ)։ 70 սանթիմ։

Բ. Ց. Վարդուկեանց. ԴԱՑԼԱՑԼԻԿ Դրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Ասատուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

—Բաֆֆի. — ՍԱՄՈՒԷԼ (Բաֆֆիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ օրի նիւթը առնուած է Դ դարի Հայերի կեանքէն և որ, բացի իր ներշնչած ազատասիրական զգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերին, սովորութիւններին և այլնի վրայ։) 10 ֆր.

Ս. Հախումեան. ՄԱՆԻԿ (*Մի ժամանակուց վէպ է որ կը պատկերացունէ ազգասիրի և ազգասէր պատանեկ ոմանց իրենց կոկորդն անցուցած ուսումնարանների և եկեղեցիների փողերն և բարերարութեան դիմակի տակ զգուելի չարագործութիւններ անելը*)։ Գինն է 1 ֆրանք և 40 սանթիմ։

—Հ. Մ. Քաջունի—Աշխարհագրութիւն Հին եւ Նոր Հայաստանեայց — (Աշխարհաբար լեզուով գրուած և 298 երեսներէ բաղկացած այս աշխարհագրութիւն՝ համառօտ և ամփոփ կերպով տեղեկութիւններ կուտայ Նոր Հայաստանի և առաւելապէս Հին Հայաստանի վրայ որ չատ հարկաւոր է Հայոց անցեալ պատմութեան ծանօթանալ ուզողներուն)։ 2 ֆր. 50 սնթ.

—Գամառ-Քաթիպա · —ԱԶԱՏ ԵՐԳԵՐ (Գամառ-Քաթիպայի «Բանաստեղծութիւն»ներէն Ազատ երգերի մասը առանձին տետրակով տպագրուած)։ 20 *սանթիմ*։

— ԳԷՈՐԳ ԱԲՈՎԵԱՆՑ · — Համառօտ պատմութիւն Հայոց ազգի պատմութեան (Բ տիպ. Տփղիս :) 2 ֆր ·

— Հ. ԹԻՐՃԻՄԱՆԵԱՆ. — Համառօտ պատմութիւն Հայոց (6րդ տիպ · վէնետիկ) : 2 ֆր. 50 սնթմ.

—Գամառ Քաթիպա.—ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (*Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազատաչունչ և հրահանգիչ բանաստեղծութիւնները կը պարունակէ · սկիզբն գրուած է հեղինակին պատկերը*)։ 2 ֆրգ։

—Հ · Գ. Ալիշան— Նշմարք եւ նշխարք Հայաստանի Ա, Բ և Գ պրակներ (Հայաստանի հետաքրքրական տեղերէն և քաղաքներէն 36ին լուսանկար պատկերները գետեզրուած են նշմարքի 3 պրակներին մէջ, անոնցմէ իւրաքանչիւրին վրայ պատմական և աշխարհագրական հմտալից տեղեկութիւններով, աշխարհաբար լեզուով գրուած Վեր. Հ. Գ. Ալիշանէն)։ 3 պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

—Հ. Գ. Մ · Ալիշան — Հայկական աշխարհագիտութիւն (1881ին Վենետիկ գումարուած Աշխարհագրական Հայագային ժողովին մէջ Հայաստանի աշխարհագրութեան նկատմամբ Հ. Գ. Ալիշանի կարգացած ընդարձակ և հմտալից ճառին թարգմանութիւնն է հայերէն աշխարհաբար լեզուով)։ 65 սանթիմ։

Հ · Գ. Ալիշան — Պատկերազարդ Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի (Բազմահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրութեամբն հրատարակուած այս աշխարհագրութիւն որ մեծագիր և երկհազար 105 երեսներէ բաղկացած է և դիւրահասկանալի պարզ գրաբար լեզուով գրուած, զարդարուած է 35ի չափ պատկերներով որոց մէջ կը գտնուին Վան քաղաքի, Վանի բերդի, Պայազիտի, Էջմիածնի, Անիի զանազան նշանաւոր աւերակներուն և պատկերներն։ Գրքին վերջը կը գտնուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ Հայքի, բոլոր քաղաքներուն, բերդերի, գիւղերի, լեռներուն, գետերու մի ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին առջեւ նշանակուած է թէ գրքին քանիերորդ տանը մէջ գրուած է անոր վրայ)։ Գինն 5 ֆր. և 50 սնթմ.։

ՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1878ին Պերլին գնացած Հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ Թղթի վրայ առնուած և պատուիրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տպագրուած, կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ՏԵԱՐՔ ՄՕՐՍ ԵՒ ԸՆԿ.
ՍԵՂԱՆԱՒՈՐՔ
426 Մէյն, փիզիճը փողոցի անկիւնը
ՈՒՍՓՐՐ (Worcester Mass. U. S. America)

Սոյն դրամատան դիմող Հայերը՝ կ. Պոլսոյ և Քարբերդի մէջ անդրիական և գաղղիական ոսկիով վճարելի փոխանակագիր կրնան ստանալ յոյժ չահաւոր պայմաններով։

Փորձեցէք և գոհ պիտի ըլլաք։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ · ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Մ· Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.